Այսօր տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի հերթական նիստը, որը վարել է հանձնաժողովի նախագահ Սիմոն Տեր-Սիմոնյանը:

Հանձնաժողովը քննարկել է 17 բարեգործական ծրագիր: Մասնավորապես, քննարկվել և հաստատվել են՝

«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող «Գորիս-Ստեփանակերտ ավտոճանապարհի ծածկի հորատում և լաբորատոր փորձարկումներ», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի «Այգեհովիտ» պոմպակայանի էլեկտրաֆիկացում», «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի Խաշթառակ-Դիտավան ոռոգման ջրանցքի կառուցման նախագծում» և «Օրորոց» ծրագրերը.

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հին վոհարանի շենքի նորոգման» և «Մայր Աթոռի կաթսայատան վերանորոգման» ծրագրերը.

«Մատենադարան» հիմնադրամի կողմից իրականացվող «Մատենադարան» Մեսրոպ Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ» ՊՈԱԿ-ի գլխավոր մասնաշենքի և շրջակա տարածքների վերակառուցման նախագծուն» ծրագիրը.

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վազգեն Սարգսյանի անվան հանրապետական մարզադաշտի ենթակառույցների բարելավում» ծրագիրը.

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ոսկեհասկ-Բայանդուր» խմելու ջրագծի վերանորոգում» ծրագիրը.

«Երևան իմ սեր» հիմնադրամի կողմից իրականացվող «Սբ. Հովհաննես Մկրտիչ եկեղեցուն կից քաղաքային սոցիալ-հոգևոր ենթակառուցվածքների զարգացում» ծրագիրը.

«Ջերմուկ սոցիալ-տնտեսական զարգացմանն աջակցության» հիմնադրամի կողմից իրականացվող «Ջերմուկ քաղաքի առողջարանային մասի արտաքին լուսավորության ցանցի վերակառուցում և արդիականացում» ծրագիրը:

Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Հինարար գիտական գրադարան» ՊՈԱԿ-ում ցանցային միջավայրում աշխատող թվային բովանդակության ձևավորման կենտրոնի ստեղծում» ծրագիրը:

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառ համայնքի հանրային պուրակի բարեկարգում», «Ամառային ճամբար Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Գյումրի քաղաքի և Մարմաշեն ու Հովունու գյուղերի 600 երեխաների համար», «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի համայնքների երեխաների համար քրիստոնեական ամառային ճամբարի անցկացում» և «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի 20 համայնքների երեխաների համար քրիստոնեական ամառային ճամբարի անցկացում» ծրագրերը:

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագիրը, որի նպատակն է նպաստել Հայաստանի Հանրապետությունում բժշկական ծառայությունների ընդլայնմանը ու որակի բարձրացմանը:

Նիստում քննարկվել և հաստատվել են նաև նախկինում հաստատված ծրագրերի շրջանակներում իրականացվող հարակից գործարքներ և տարբեր կազմակերպությունների հասցեներով ստացված բարեգործական բեռների ներմուծման ծրագրեր: